

զարագլուխ կազմող, Տելհիի Պատգամաւորութեան պատմութիւնը ճշգրտորէն ժամանակագրուած է հանգուցեալ Բրոֆ. Ս. Ռ. Ռելսընի Նախկին Տարեգրոյրիւնք Անգլիացոց ի Պեկկարս հմտալից գործին մէջ, հրատարակուած ի Լոնտրա՝ 1895ին: Ուստի աւելորդ է խօսքս երկարել սոյն Պատգամաւորութեանն Րնկերութեան ի նպաստ յառաջ եկած շատ մը առաւելութեանց վրայ:

Սթիուըրդ իր Պեկկարայի Պատմութեան մէջ կը յայտարարէ թէ՛ Պատգամաւորութեան վերադարձէն յետոյ, Կալկաթայի բնակիչները վայելեցին ա՛յնքան ազատութիւն և ապահովութիւն որքան երբեք չէին վայելած Մոզլ Կայսրութեան միւս հպատակները, և թէ այդ քաղաքը տարուէ տարի մեծցաւ ու զարգացաւ բարօրութեամբ, գեղեցկութեամբ և հարստութեամբ:

Ռելիքըմ բազմահմուտ և խորագնին դիտող ժամանակագիրը, իր Խորհրդածոյրիւնք Հեղիաստանի Գործերուն վրայ երկին մէջ, 1782ին լոյս տեսած ի Լոնտրա, սոյն նշանաւոր Պատգամաւորութեան վրայ խօսելով՝ կ'ըսէ.

«Անգլիական Րնկերութեան վաճառականութիւնը ի Պեկկալա, Աւուրունկգիպի իշխանութեան ենթարկուելու շրջանէն ի վեր, օր ըստ օրէ աւելի ընդարձակուեցաւ, բայց ո՛չ առանց Մոզլ կառավարական պաշտօնէից կողմէ յաճախակի յարուցուած արգելքներու, որոնցմէ դժուարաւ կրնար բոլորովին զերծ ըլլալ գաղթականութիւն մը՝ որ կը գտնուէր այսպիսի դիրքի և պայմաններու մէջ: Ուստի Րնկերութիւնը լաւ բմբունելով Պեկկալայի մէջ և այլուր իր հաստատութեանց անստոյգ վիճակը, 1715ին, նուիրակութիւն մը դրկեց, կազմուած երկու պարոններէ, որոնց առաջինը կը կոչուէր ճօհն Սըրման իսկ երկրորդը՝ շատ նշանաւոր վաճառական մը՝ Խօջայ

Սարհազ, առնց նպատակը պիտի ըլլար՝ ինչըրել զարման անցեալի և ապահովութիւն ապագայի հարստահարութեանց դէմ, ինչպէս նաեւ ընդարձակում մը Րնկերութեան հին և նոր ստանալիք առանձնաշնորհութեանց, և մասնաւորապէս փոքրիկ հողամասի մը շնորհումը այն ամէն տեղ ուր ան ուզէր Գործակալատուն մը հաստատել »:

Ահա ինչպիսի՛ լեզու կը բանեցնէին Անգլիացիք՝ հազիւ քառասուն տարիներ առաջ Փլասսիի երեւելի պատերազմէն, որուն յաջող վերջաւորութեամբ, անոնք բացարձակ տէր դարձան Պեկկալայի: Այս նուիրակութեան ձեռքով էր որ Րնկերութիւնը ստացաւ Մեծ Գլորմանը որով կ'արտօնուէր ո՛ր և է տուրքէ Մոզլ իշխանութեան երկիրներուն մէջ իր ըրած վաճառականութեան համար, պայմանով վճարելու տարեկան տասը հազար ռուբլի Բեչքիաչ կամ նուէր մը:

Պատգամաւորութեան վերադարձէն յետոյ, արձանագրութեանց մէջ այլ եւս յիշատակութիւն չկայ Խոջայ Սարհազի մասին. ու ես չկարողացայ ստուգել իր մահահուան թուականը կամ տեղը ուր վախճանեցաւ: Իր մարմինը թաղուած չէ ի Կալկաթա, Չինսուրահ, Սայտապատ, Հուկլի կամ Տաքքա, ուր Հայերը ապրեցան ու մեռան ԺԸ դարու առաջին կէսին մէջ: Ան կրնայ վերադարձած ըլլալ իր ծննդավայրը՝ Զուլա՝ ու հոն վախճանտմ:

Մատրասի եկեղեցւոյն մէջ կը գտնուի Սարհազի մը շիրիմը, ուր ան մեռած էր 1701ին: Գուցէ ի՛նք ըլլայ Խօջայ Խարայէլ Սարհազի հայրը՝ գիւնանագէտ Սարհազը:

Պէտք է յիշատակել որ միայն երեւելի անձեր կը թաղուին Հայ եկեղեցիներու մէջ:

M. R. A. S (London) ՄԵՐՈՎԵ Յ. ՍԵՅԱՆՑ
Թրգմ. Հ. Փ. Ե.